

Փետրուար 2, 2007

## ՄԱՍԼՈՅ ԶԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

### «ԹԱՅՄ» Շաբաթաթերթը Վաւերագրական Տեսասկաւառակ Մը Կը Տարածէ Եւ Հայոց Ցեղասպանութեան Մասին Դիրք Կը Ճշդէ

«ԹԱՅՄ» Շաբաթաթերթի Եւրոպայի հրատարակութեան Փետրուար 12, 2007ի թիւը, որ Եւրոպայի տարածքին թերթավաճառներու կրպակներէն կարելի է ձեռք բերել Փետրուար 2էն սկսեալ, կ'ընդգրկէ Հայոց Ցեղասպանութեան մասին փաստագրական տեղեկութիւններով ամբողջացած լրիւ էջ մը, ինչպէս նաեւ՝ Հայոց Ցեղասպանութեան մասին անվճար վաւերագրական տեսասկաւառակ մը: Անգլերէնով եւ ֆրանսերէնով 52 վայրկեանսոց հանգամանալից վաւերագրական այս ֆիլմը պատրաստուած է ֆրանսացի բեմադրիչ Լորանս ժուրտանի կողմէ: Տեսասկաւառակը նաեւ կը ներկայացնէ 46 վայրկեանսոց հարցազրոյց մը Հայոց Ցեղասպանութեան առաջատար մասնագետ Դր. Իվ Թերնոնի հետ:

Տեսասկաւառակը եւ լրիւ մէկ էջնոց յայտարարութիւնը անվճար կերպով տրամադրուած են Եւրոպայի «ԹԱՅՄ» Շաբաթաթերթին կողմէ (Տպաքանակ՝ 550,000), գիտակեցելէն ետք թէ իր անձնակազմը Յունիս 6, 2005ի Եւրոպայի «ԹԱՅՄ»-ին մէջ, դէպի Թուրքիա զբօսաշրջիկութիւնը զարգացնելու դիմակին տակ զետեղած էր թրքական տեսասկաւառակ մը որպէս վճարովի ծանուցում, առանց զայն ճշգրիտ կերպով ստուգելու: Թրքական տեսասկաւառակի զետեղումը, որ վճարուած էր Անգարայի Առեւտրական Պալատին կողմէ, խաբէութեան ակտ մըն էր, որ կը միտէր Հայոց Ցեղասպանութեան մասին նենգամիտ կեղծիքներ եւ ուրացողական պրոպականդ սփռել:

Այս սխալը ուղղելու համար, Եւրոպայի «ԹԱՅՄ»-ը իր Հոկտեմբեր 17, 2005ի թիւին մէջ ամբողջ էջ մը գրաւող, խմբագրութիւնը քննադատող նամակ մը հրատարակեց: Նամակը ստորագրուած էր ֆրանսական հետեւեալ հինգ կազմակերպութիւններու կողմէ. «Մեմուար 2000», Ֆրանսայի Հայկական Կազմակերպութիւններու Համադրման Խորհուրդ (CCAF), Հայկական Դատի Պաշտպանութեան Կոմիտէ (CDCA)- ANC France, «Ժաքքիւզ» (Կ'ամբաստանեմ), եւ Շարժում՝ Ցեղամոլութեան Դեմ ու Ժողովուրդներու Միջեւ Բարեկամութեան Օգտին (MRAP): Նամակէն անմիջապէս ետք, խմբագրական նօթով մը, «ԹԱՅՄ» ներողամտութիւն խնդրեց թրքական տեսասկաւարակը տարածելուն համար:

2005ի Դեկտեմբերին, այս հինգ կազմակերպութիւնները՝ Չուիցերիա-Հայաստան Ընկերակցութիւնը (SAA), Հայ Փաստաբաններու ու Դատաւորներու Ֆրանսական Միութիւնը (AFAJA), Արդարութեան եւ Ժողովրդավարութեան ԵՐՐՈ-ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՇՆՈՒԹԻՒՆԸ (EAFJD) եւ «Քալիֆորնիա Քուրիեր» շաբաթաթերթը միասնաբար «ԹԱՅՄ»-ի ղեկավարներուն հետ

համաձայնություն մը կնքեցին մէկ ընդմիջտ ապահովեցնելով որ այլեւս Հայոց Յեղասպանութեան փաստերը պիտի չի խեղադիւրուին շաբաթաթերթին էջերէն ներս:

Ըստ համաձայնութեան, «ԹԱՅՄ Ինթերնաշննը» խմբագիր Մայքլ Էլիոթ կատարեց հետեւեալ հրապարակային յայտարարութիւնը. «Բոլորին ուշադրութեան կը յանձնենք այն տեղեկութիւնը թէ քայլ պահելով այլ գլխաւոր լրատուական կազմակերպութիւններու հետ, «ԹԱՅՄ»-ի քաղաքականութիւնն ու դիրքորոշումն է Հայոց Յեղասպանութեան ակնարկել որպէս պատմական իրողութիւն: Ըստ այնմ, ես պիտի տեղեկացնեմ մեր թղթակիցներուն եւ խմբագիրներուն թէ «Հայոց Յեղասպանութիւն» արտայայտութիւնը պարտին օգտագործել առանց որակաւորման»:

Վերել նշուած կազմակերպութիւնները լիովին գոհ են «ԹԱՅՄ» Շաբաթաթերթի կողմէ նախաձեռնուած սրբագրողական այս քայլերէն: Անոնք նաեւ ուրախ են, որ Հայոց Յեղասպանութեան փաստերը խեղադիւրելու, մեծ ծախսերու գնով կատարուած թրքական ջանքերը պատշաճ կերպով հակադարձուեցան շնորհիւ սերտ համագործակցութեան սոյն կազմակերպութիւններու եւ «ԹԱՅՄ» Շաբաթաթերթի միջեւ, որ բոլոր այլ նկատողութիւններէ աւելի բարձր դասեց լրատութեան բարոյական չափանիշները:

=== ԱՒԱՐՏ ===